

զարնուած, դեղնախտաւոր, առնուազն մարդատեաց ու կեանքին նայելու իսկ անտրամադիր, նոյնիսկ այն պարագային, երբ այդ կեանքը չրլլար 1890ի մանուկներուն սպասող զարհուրանքը...: Ու ասիկա այսպէս քու գեղիդ, քու ցեղիդ, քու ամբողջ ժողովուրդիդ համար: Թող ըլլար Մաթիկը իմ տեղը, ամէնէն թուրք քաղաքին ամէնէն մռայլ մէկ խորշին ծնած: Թող ըլլար հացին տաշտը պառկած: Թող երկաթէն ըլլար ծակուած առաջին իսկ ամսուն իր կեանքին, կը խորհիմ, թէ պիտի ներէր ինծի իմ տրտմութիւնը, զոր չվարանեցաւ երեսիս զարնել շքեղ լաւատեսութեամբ մը, իր անձին ու զրկանքներուն հանդէսովը այլապէս լուսաւորուած: Բայց ան ի՛նչ գիտնար, ուրկէ՛ գիտնար, թէ բանուորի տղաքը ունին ամէնուն նման ապրումներ եւ այն ուրիշները, որոնք մեզի միայն եղան սեփական: Այսպէս է, որ իմ ծննդեան խորշը ձորով մը բաժնուած էր հինաւուրց ու մռայլ ծառաստանէ մը, չորս մեծ, դարաւոր սօսիներու քով ուրիշ քարքարուտներով ողկուզուած անտառակ, ու այդ ժայռերուն թեւերուն տակ դնդակ մը պլլելու պէս սեղմող մզկիթին մը-թագնած կապար գմբէթը, տերեւներուն մէջ ճիւղերն ու բոյսերը տաճկացնող մահիկ իր ճարմանգովը, սուր իր սայլերովը աչքդ սլաքող: Թող ըլլար Մաթիկը գեղ ալ բնակած -ձմեռները մեր մանարանը աշխատանք չունէր ու մեզ կը ճամբէր դէպի մեր գեղերը- ու ազատ լեռներու ձիւնին մէջ տաքնալու, եփելու դրուած ամուր մանուկը նոյն ատեն: Ու քաղաք դարձին կը պառկէր հիւանդ, կարօտովը իր ամայութիւններուն: Ու քաշուէր, բայց «աղեխարշ» յուշերով դէպի պուրակը, աղբիւրները՝ այնքան բազմաթիւ, նոճիները՝ այնքան մինիմիկ կամ այնքան իմաստուն, խոժոռ, բայց սարսափէն գամուած իր հիւղի սեմին, ուրականներէն մարդերու, որոնք սեւ իրենց վերարկուները մէկ թեւին նետած, իրենց ահաւոր մօրուքը փարատելեն ապտէսի լուացումը կը կատարէին այդ ջուրերուն առջին, աչքով փնտռելով ուտուելիք մանչուկ մը, որը կամ ոչ, հայ կամ թուրք, այդ գազաններուն հա-